

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 21

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Ա. Հունանյանը, Տ. Գալստյանը, Վ. Մկրտչյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Հ. Վարդանյանը, Ա. Խաչատրյանը, Մ. Տաշչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Վ. Սաֆարյանը, Գ. Եղիազարյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը, ինչպես նաև Աշտարակ համայնքի բնակիչներ:

Մինչ նիստի օրակարգային հարցերին անցնելը համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի առաջարկությամբ ներկաները մեկ րոպե լուրջամբ հարգեցին Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս Շառլ Ազնավուրի հիշատակը, որից հետո.

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի ինը ամսվա հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ջեկուցող՝ Գ. Եղիազարյան/

3. Աշտարակ համայնքի ավագանու 18.09.2018թ. N 5-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Աշտարակ համայնքի ավագանու 18.09.2018թ. N 4-Ա և N 6-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Բելա Սաֆարյանին Աշտարակի թիվ 2 <<Արևիկ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 7-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Գ. Եղիազարյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Ա. Մնացականյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

**/1/ Օրակարգը հաստատվել է 10 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:
ՍՈՒՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ Ն.ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի 2018 թվականի բյուջեի ինը ամսվա հաշվետվությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գևորգ Եղիազարյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով, սույն հաղորդումն ընդունելի գիտություն:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, մասնավորապես նրան հետաքրքրում էր, թե բյուջեի տարեկան կատարողականը ինչպես կարող է ազդել համայնքին տրամադրվող դոտացիայի չափի վրա, Գ. Եղիազարյանը նշեց, որ նշված հաղորդումը կապ չունի դոտացիաների տրամադրման հետ: Միաժամանակ հայտնեց, որ դոտացիաները տրամադրվում են <<Ֆիանանսական համահարթեցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:
ՍՈՒՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ Ն.ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ համայնքի ավագանու 18.09.2018թ. N 5-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով, անվավեր ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 18.09.2018թ. թիվ 5-Ն որոշումը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - *Աշտարակ համայնքի ավագանու 18.09.2018թ. N 4-Ա և N 6-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին*

Հարցը ներկայացրեց Ա. Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով, անվավեր ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 18.09.2018թ. թիվ 4-Ա և թիվ 6-Ա որոշումները:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Բելա Սաֆարյանին Աշտարակի թիվ 2 <<Արևիկ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համայնքի ղեկավարի առաջարկությանը համաձայնություն տալու մասին

Հարցը զեկուցեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Բելա Սաֆարյանին Աշտարակի թիվ 2 <<Արևիկ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար:

Զեկուցողին հարցեր ուղղեց Ա. Սարգսյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11- ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Աշտարակ համայնքի ավագանու 15.11.2017թ.-ի <<Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 7-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը և նշեց, որ առաջարկվող փոփոխությունը կապված է 2018-2019թթ. ուսումնական տարվա ընթացքում երեխաների աճին զուգահեռ մանկավարժների թվի ավելացման հետ: Նա, մասնավորապես նշեց, որ երեխաները հատկապես ավելացել են ժողովրդական նվազարանների դասարաններում և առաջարկեց <<36>> թվի փոխարեն սահմանել <<40>> թիվը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը և Տ. Գալստյանը, որոնց Գ. Եղիազարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11- ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը և առաջարկեց թույլատրել Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու համար: Միաժամանակ առաջարկեց հաստատել նշված հողամասերի վաճառքի մեկնարկային գները:

Հողամասերի գտնվելու տեղի վերաբերյալ զեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը և Մ. Տաշյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11- ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել Երևանյան N 96/1 հասցեում գտնվող ավտոգազացանձակայանի անվտանգությունն ապահովելու, վերակառուցելու և ընդլայնման նպատակով <<ՌԵՅՆԲՈՈՒ>> ՍՊԸ-ի ԱԳԼՃԿ-ի տարածքին կից 199,3 ընդհանուր մակերեսով /117,3քմ և 82քմ/ հողամասերն ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել <<ՌԵՅՆԲՈՈՒ>> ՍՊԸ-ին:

Հողամասերի չափերի վերաբերյալ զեկուցողին հարցեր ուղղեց Ն. Պետրոսյանը, որին Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11- ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2018 թվականի հոկտեմբերի 5-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ